ԿԱՐԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու

ԵԿԵՂԵՑՈՒ ԴԵՐԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿՈՒՄ
(Թ.- ԺԱ. դարեր)

Եկեղեցին կարեւորագույն դերակատարություն ուներ միջնադարյան Հայաստանի քաղաքական, տնտեսական եւ հոգեւոր կյանքում: Ձեռք բերելով նյութական հարստություն եւ դառնալով ավատատիրական կարգերի հովանավորն ու պաշտպանը, Եկեղեցին ինքն էր թելադրում ավատատիրական հարաբերությունները կարգավորող սկզբունքները: Իր ձեռքում կենտրոնացնելով հասարակության հոգեւոր կյանքի ղեկավարությունը՝ եկեղեցին պետության գաղափարական հենարանն ու աջակիցն էր, իսկ կենտրոնական իշխանության թուլացման կամ բացակայության ժամանակ գլխավորում էր հասարակության համախմբման գործը: Եկեղեցու եւ զինվորականության փոխազդեցությունը բավականին սերտ էր եւ բխում էր եկեղեցի-պետություն փոխհարաբերություններից: Քանի որ եւ՛ եկեղեցին եւ՛ բանակը միջնադարյան պետության կառուցվածքային տարրերից էին, ապա նրանց առնչությունները եւ համագործակցությունը նպաստում էին պետական իշխանության ամրապնդմանը: Եկեղեցին, որպես հոգեւոր իշխանության մարմնավորող՝ բանակի եւ զինվորականության հովանավորն էր: Եկեղեցու հեղինակությունը եւ ազդեցությունը հասարակության տարբեր դասերի վրա պայմանավորված էր, գլխավորապես, նրա օրենսդրական եւ դատավարական գործունեությամբ[1]: Քանի որ իրեն էր վերապահված արդարադատության որոշ մասի իրականացումը, ապա Եկեղեցին իրավական եւ բարոյական նորմերով սահմանում եւ կանոնակարգում էր հասարակության տարբեր խավերի, հատկապես հոգեւորականության իրավունքները եւ պարտականությունները: Վերջիններս ամրագրվում էին եկեղեցական ժողովների ժամանակ ընդունված կանոններում: Եկեղեցին հետեւողականորեն ձգտում էր հոգեւորականներին հեռու պահել զինվորական սովորույթներից եւ բարքերից: Մասնավորապես, քահանաներին արգելվում էր զինվորական հանդերձներ հագնել. «Եւ մի՛ զձեւ զինուորաց հանդերձի ունել եւ ի կարգի պաշտաւնէից կալ, այլ ընդ զինուորս կայցեն, այլ զձեւ եկեղեցականաց ունել իւրոյ կարգին վայել է ըստ քահանայական աւրինի»[2]:

Վաղ միջնադարում տարածված էր նաեւ հոգեւորականների՝ զինվորական ծառայության անցնելու երեւույթը. «Ոմանք յուիսրէ Եկեղեցւոյ զկարգ եւ զպաշտաւն թողին եւ հեծելութիւն ստացան»[3]: Եկեղեցին նման հոգեւորականներին զրկում էր պաշտոնից ու կոչումից եւ նրանց փոխարեն նշանակում «արժանավոր անձանց», ովքեր սրբությամբ եւ զգուշությամբ էին կատարում եկեղեցական կարգը[4]:

1 Տե՛ս **Ս. Թորոսյան,** Ընդդատությունը միջնադարյան Հայաստանում. «Բանբեր մատենադարանի», 8, Երեւան, 1967, էջ 83:

2 «Կանոնագիրք Հայոց», հ. Ա, Աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երեւան, 1964, էջ 483:

3 Անդ, էջ 205:

4 Տե՛ս անդ:

Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում եւ դրանից հետո եւս շարունակվում է զինվորական կենցաղի տարածված լինելը եկեղեցական միջավայրում: Ժամանակի հոգեւոր գործիչների երկերում նմանատիպ երեւույթները անվերապահորեն դատապարտվում էին: Հոգեւորականների վրա դրված արգելքներից թերեւս ամենագլխավորը զենք կրելու արգելքն էր: Այն հիմնավորվում էր հետեւյալ փաստարկով. «զի զէն զինուորութեան մերոյ ոչ է մարմնաւոր, այլ հոգեւոր եւ ապրուածային, որովք պատերազմիմք ոչ ընդ մարմնոյ եւ արեան, այլ ընդ իշխանութիւնս եւ ընդ պետութիւնս, ընդ այսս չարութեան, որ ի ներքոյ երկնից»[5]: Զենք կրելը թույլատրելի էր համարվում միայն «եւ բայց թէ ի ճանապարհի, եթէ ի հետիոտս եւ թէ երիւարաւ՝ առնուլ զէնս յաղագս երկիւղի ինչ եղելոյ կարծեաց...»: Այս դեպքում պարտադիր էր զենքը կրել պարկեշտությամբ եւ ոչ թե՝ «ըստ զինուորութեան կարգի կապարճիք եւ կամ կազմեալ սուսերաւ»[6]:

Եկեղեցին նաեւ արգելում էր հոգեւորականներին սպանություն գործել, թեկուզ դա կատարվեր ինքնապաշտպանության նպատակով: Այս պարագայում քահանային զրկում էին կոչումից[7]:

Հետեւաբար, հոգեւորականության զինված մասնակցությունը հայրենիքի պաշտպանությանը ռազմի դաշտում հակասում էր քրիստոնեական գաղափարներին: Հոգեւորականների պարտքն էր ժողովրդի մեջ ամրապնդել հավատը, բարձրացնել եկեղեցու հեղինակությունը, ուստի հոգեւորականների վարքագիծը չպետք է հակասեր իրենց կողմից քարոզվող գաղափարներին: Իհարկե, սա չի նշանակում, որ հայ հոգեւորականներն իրենց մասնակցությունը չէին բերում հայրենիքի համար մղվող պայքարին: Հոգեւորականների մասնակցությունը դրված էր այլ հարթության վրա, նրանց ներկայությունը զորքի մարտական ոգին բարձրացնելու տեսանկյունից ուներ անգնահատելի նշանակություն:

Բոլոր ժամանակներում ճակատամարտերի եւ պատերազմների ելքի վրա մեծ եւ վճռորոշ ազդեցություն է ունեցել զորքի բարոյական վիճակը, որը համարվում է բանակի գաղտնի զենքը[8]: Եթե զինվորը ֆիզիկապես եւ բարոյապես ճնշված է, ապա դա բացասական ազդեցություն է թողնում նրա վարքագծի վրա մարտի դաշտում[9]: Այդ պատճառով խիստ կարեւորվում է զինվորների ներքին գաղափարական հենարանի առկայությունը, որը իմաստավորում է զինվորի պայքարը, բարձրացնում է նրա գիտակցական մակարդակը եւ մղում է նրան անձնազոհության[10]:

Հայոց բանակում նույնպես կարեւորվում էր զինվորների հոգեբանական պատրաստվածությունը: Այս առումով կարեւոր տեղ էր հատկացվում կրոնին: Քանի որ միջ-

5 **Ներէս Շնորհալի,** Թուղթ ընդհանրական, Աշխատասիրությամբ Է. Բաղդասարյանի, Երեւան, 1995, էջ 138:

6 Անդ:

7 Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հ. Ա, էջ 303, հ. Բ, Աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երեւան, 1971,էջ 134:

8 **Н. Коупленд**, *Психология и солдат*, Москва, 1960, էջ 21:

9 **Г. Луков**, *Психология*, Москва, 1960, էջ 42:

10 Տե՛ս անդ, էջ 56:

նադարյան Հայաստանում գերիշխող էր քրիստոնեական ուսմունքը եւ հասարակության բոլոր խավերն էլ առաջնորդվում էին նրա գաղափարներով, ապա զինվորների հոգեբանական կայունությունը ապահովելու, նրանց քաջալերելու գործում մեծ տեղ էր տրվում Եկեղեցուն: Վերջինիս վրա էր դրված այն միջոցառումների իրականացումը, որոնք զորքի մեջ կբարձրացնեին մարտական ոգին, ինքնավստահությունը, հավատը հաղթանակի, իրենց պայքարի արդարացիության նկատմամբ: Քրիստոնեական բարոյական արժեքները համալրում էին հայ զինվորականության գաղափարական զինանոցը: Եկեղեցին քրիստոնեական գաղափարախոսության դրույթների հիման վրա ձեւակերպում էր այն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվեր զինվորականությունը: Այս տեսանկյունից կարեւորվում էր հոգեւոր դաստիարակությունը, որը զինվորական կենցաղի անբաժան մասն էր կազմում: Եկեղեցին առաջնակարգ նշանակություն էր տալիս զինվորականների կողմից եկեղեցական ծեսերի եւ արարողությունների ճշգրիտ կատարմանը եւ հիմնավորում էր դրանց անհրաժեշտությունը:

Զինվորականներին ուղղված կոչում նշվում էր, որ «Նաեւ քան զայլ հասարակաց ժողովրդականաղ՝ ձեզ առաւել պարտ է երկնչել յԱստուծոյ եւ զպատուիրանս նորա պահել, զի յամենայն ժամ ընդդէմ սրոյ թշնամեաց ունիք պատերազմել: ... Վասնորոյ, առաւել քան մարմնական զինուք, հաւատոյ զինովն վառեցարուք...»[11]: Հավատքի զենքերից գլխավորը ասպվածապաշտությունն էր. այն ենթադրում էր, որ զինվորականները պետք է հարգանքով վերաբերվեին հոգեւորականներին եւ չխախտեին ասպծո պատվիրանները. «եւ մի յաղագս զինուորութեանդ արհամարհեալ զպատուիրանս Աստուծոյ, լինիցիք անհնազանդք առաջնորդաց, որք խրատեն զձեզ պահել զպատուիրանս Աստուծոյ»[12]:

Հայոց զորքի հետ հոգեւորականները մշտապես մասնակցում էին պատերազմներին եւ արշավանքներին: Հոգեւորականների պարտականությունն էր կատարել եկեղեցական արարողությունները: Ղեւոնդը կարեւոր եւ մանրամասն տեղեկություններ է հաղորդում հայոց բանակի օրվա կանոնակարգի մասին. աղոթքները սովորաբար սկսվում էին երեկոյան, առավոտյան ժամերգություն էր կատարվում, պատարագ էր մատուցվում, որից հետո զինվորները հաղորդություն էին ստանում, այնուհետեւ նախաճաշում: Միայն դրանից հետո զորքը դասավորվում էր եւ պատրաստվում ճակատամարտի. «Եւ ինքեանք զգիշերն ողջոյն ի հսկումն աղօթից կանխեալ՝ հայցէին ի բոլորեցունց տեառնէն զմեծազօր աջոյն օգնականութիւն եւ ուղղութեամբ դատել ի մէջ նոցա եւ թշնամեացն: Եւ իսկոյն ընդ ծագել առաւօտին իբրեւ յանգէր պաշտօնն առաւօտին՝ մատուցանէր եւ հոգեւոր պատարագն, եւ արժանաւորք հաղորդէին մարմնոյ եւ արեան տեառն, իբրեւ յետին թոշակ զայն համարեալ անձանց: Եւ առնուին սուղ ինչ կերակուր յաղագս զօրութեան մարմնոյ: Եւ նոյնժամայն յարուցեալ յարդարեցին զունդ առ զունդ եւ ճակատ առ ճակատ, եւ խմբեցաւ պատերազմն...»[13]: Մինչեւ մարտի սկսվելը քահանաները շրջում էին զինվորների շարքերում, աղոթքներ եւ քարոզներ կարդում, օրհնում զինվորներին եւ

11 **Ներսէս Շնորհալի**, էջ 155:

12 Անդ:

13 **Ղեւոնդ,** Պատմութիւն, Սանկտ Պետերբուրգ, 1887, էջ 24-25:

նրանց զենքերը: Ճակատամարտից առաջ զինվորականները հաղորդություն էին ստանում եւ խոստովանում իրենց մեղքերը. «Եւ հասանէր Վասակ ի վանք մի. հաղորդեցան ինքն եւ ամենայն զօրքն եւ խոստովանեցան զմեղս իւրեանց բարի խոստովանութեամբ, որ ի Քրիստոս Յիսուս»[14]: Նույն երեւույթը տեսնում ենք Սասունի իշխանության բանակում, որտեղ զինվորները միշտ նախապես հաղորդվում էին. «Ասէ Թ-ռոնիկն. «Են իմ հազար ձիաւորք, որ հանապազ հաղորդին ի մարմնոյ եւ յարենէ Որդւոյն Աստուծոյ, եւ զայս այսպէս գիտեմ՝ զի Փիլառտոսն եւ ամենայն զօրք իւր թափուր եւ ունայն են ի հաւատոցն Քրիստոսի եւ կան լցեալ ամենայն չարաչար յանցանօք»»[15]: Եկեղեցական արարողությունների կատարման առումով ուշագրավ է Արյան լճի ճակատամարտի վերաբերյալ Թ-ովմա Արծրունու վկայությունը. «ընթերցան քահանայքն զսուրբ Աւետարանն ի տեղիս տեղիս ի բանակին, եւ կատարեալ զաղօթսն եւ զոհացեալ՝ եդուն զփառս Աստուծոյ եւ հատուցին զամէնն»[16]: Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունին նախ Ավետարան է կարդում, աղոթում եւ միայն հետո պատրաստվում է ճակատամարտի. «Եւ մինչդեռ արեգակն յերրորդ ժամուն արփիաթեւէր զկամարն երկնի, եւ դեռ ընթեռնոյր Աւետարանն սուրբ՝ գայ ոմն ի սուրհանդակաց եւ ասէ, «Ընդէ՞ր ձիգ եւ յաւէժ աղօթէ տէր իմ արքայ, եւ ահա ճակատ այլազգեացն մերձեցաւ ի բանակ սրբութեան տեառն»: Եւ արքայ այնուհետեւ կայիւն սրտիւ եւ հեզահամբոյր քաջութեամբ ոչ զաչս եւ ոչ զբարբառ առ ազդողն ամբառնայ, այլ կատարեալ զսովորական աղօթսն, իմացեալ զիմաստնոյն թէ, «Տեառն է պատերազմ», եւ թէ «Տէր ամբարտաւանից հակառակ կայ, եւ տայ զշնորհսն խոնարհացն»[17]: Աբաս թագավորը ճակատամարտից առաջ Աստծուն է դիմում օգնության խնդրանքով. «Եւ ինքն զափամբ գետոյն ելեալ՝ ուժգնապէս ձայնիւ զԱստուած օգնական կարդայր եւ զանուն իւր ասէր. յորմէ ահաբեկ եղեալ հիւսիսական ազգին՝ ի փախուստ դառնային»[18]: Թագավորի հավատը եւ հոգեւոր ուժը նպաստում է հաղթանակին:

Ծումբի ճակատամարտից առաջ հայ եւ վրացի զինվորները աղոթում են եւ Աստծուց խնդրում զորավիգ լինել իրենց. «այլ միայն աղօթիւք պաղատանս առ Աստուած վերառաքէին: Նոյնն եւ ամենայն քրիստոնէից աղերսական աղօթք արտասուօք սփռեալ լինէին առաջի Աստուծոյ՝ յօգնականութիւն անձանց եւ զօրացն կարդալով զանունն ահաւոր»[19]: Սասունի իշխան Թ-ռոնիկը օգնության խնդրանքով դիմում է Գլակի վանքին. «Գլակա՛յ Վանք, սո՛ւրբ Կարապետ, հասի՛ր մեզ յօգնութիւն եւ արա՛ զօրս զայս երեւելի ի վերայ հաւատացելոցս»[20]:

Հրամանատարներն իրենց զինվորներին քաջալերում էին Աստծո անունով. «տեսեալ զայն անպարտելի ահոյեանն քաջն Լիպարիտ՝ զօրացոյց զգունդն իւր եւ ասէ. «Մի՛

14 **Մատթէոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 12:

15 Անդ, էջ 207:

16 **Թ-ովմա Արծրունի եւ Անանուն**, Պատմութիւն տանն Արծրունեաց, Բնագիրը հրատարակության պատրաստեց, աշխարհաբար թարգմ. եւ ծանոթագր. Վ. Վարդանյան, Երեւան, 1985, էջ 228:

17 Անդ, էջ 466:

18 **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ**, Պատմութիւն տիեզերական, Հրատ. Ստ. Մալխասեանց, Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 172:

19 Անդ, էջ 271:

20 **Մատթէոս Ուռհայեցի**, էջ 130-131:

երկնչիք. այլ միայն զօրացի՛ք անուամբն Քրիստոսի եւ կնքեցէ՛ք զձեզ նշանաւ խաչին, եւ մեր է յաղթութիւնն»: Եւ ինքն իջեալ յերիվարէն ծունր դնէր եւ կնքէր զինքն նշանաւ Սուրբ Խաչին եւ յանձն առնէր Քրիստոսի. եւ կապէր ի պարանոցն զմասնն որ ի փրկական Խաչէն.»[21]:

Աղվանքի Վաչագան թագավորի բանակում կար հատուկ քրիստոնեական ծեսերի եւ արարողությունների համար նախատեսված կառք եւ վրան, որը բանակի հետ շրջեցնում էին. «Եւ յորժամ չու լինէր բանակին, յառաջ Սրբոցն դեսպակ ելանէր առաջի՝ սպիտակազգեաց կրաւով ծածկեալ եւ ոսկի խաչ ի վերայ դեսպակին՝ թագաւորական թագով, գունակ գունակ կերպասուցն փողփողելով, սպիտակ ձիովք, կարմրազգեացն ընդելուզեալ կերպասուք. եւ զպուրս թագաւորական ձիոցն կազմեալ թագաւ եւ բազմութիւն պաշտօնէիցն առաջի եւ զկնի դեսպակին՝ խաչ ի ձեռս, սաղմոսանուագ երգովք միաբան փառաւորէին զԵրրորդութեան միաբուն զօրութիւնն»[22]:

Երբ ճակատամարտը սկսվում էր, հոգեւորականները առանձնանում էին եւ շարունակում էին իրենց աղոթքները: Ճակատամարտի ամբողջ ընթացքում եւ հատկապես սկզբում, քահանաները ջերմեռանդորեն աղոթում էին՝հայցելով Աստծո ողորմածությունը. «Եւ աղօթականք արկանէին առաջի Տեառն զպաղատանսն, եւ պաշտօնեայքն բարձրացուցանէին զօրհնութիւնսն, եւ քահանայքն բարձեալ ի վեր զԱւետարանն սուրբ եւ նշանակ իւրեանց կանգնեալ զնշան Խաչին, եւ պաշտօնեայքն կատարէին զտէրունական կանոնն»[23]: Երբ 827 թ. արաբները պաշարում են Ամարասի բերդը, բնակչությունը եւ հոգեւորականությունը Քրիստոսի զորությանը ապավինելով խաչեր եւ սրբերի նշխարներ են դուրս բերում թշնամու դեմ. «Յայնժամ ապաւինեալ բերդեցեացն ի զօրութիւնն Քրիստոսի՝ զխաչս եւ զՍրբոց նշխարս ընդդէմ բերեալ ի հարուածս սաստիկս հարկանէին զպարսկական գունդն: Եւ զերծեալ յայնմանէ զՔրիստոս փառաւորէին, գոհանալով զնմանէ»[24]:

Քրիստոնեական կրոնին եւ Աստծուն ապավինելը բարձրացնում էր զորքի մարտա-

21 **Ստեփանոս Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910,էջ 375:

22 **Մովսէս Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը եւ ներածությունը Վ. Առաքելյանի, Երեւան, 1983, էջ 36-37: Բազրատունյաց թագավորության անկումից եւ հայոց բանակի ցրումից հետո կապը անցյալի ավա նդույթների հետ կտրվում է, եւ իրենց գոյությունը պահպանած հայկական զորքի մնացորդները կորցնում են հայոց բանակին բնորոշ նախկին կազմակերպվածությունը, մռռացության են մատնվում հայ զինվորականության ռազմական սովորույթները: ԺԲ դարի վերջին եւ ԺԳ դարի սկզբին Զաքարե ամիրսպասալարը մի շարք քայլեր է ձեռնարկում հայոց բանակի ավանդույթները վերականգնելու ուղղությամբ: Հատկապես ուշագրավ է զորքի հետ պատարագի համար շարժական սեղան ունենալու գաղափարը, քանի որ վրացական զորքերն ունեին իրենց հետ քահանաներ եւ պատարագ էին մատուցում. «Եւ ինքն ոչ ունէր եկեղեցի ի ճանապարհի, զի չէր սովորութիւն հայոց ի բազում ժամանակաց, յորմէ հետէ բարձան իշխանքն հայոց մեծամեծք ի պարսից եւ յիսմայէլացւոց բռնութենէն» (**Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երեւան, 1961,էջ 166-167): Զաքարե ամիրսպասալարը դիմում է Կիլիկյան Հայաստանի թագավոր Լեւոն Բ-ին (1187-1219) եւ Հայոց Կաթողիկոս Հովհաննես Զ-ին (1203-1221), որպեսզի իրեն եւս թույլ տրվի պատարագ մատուցելու եւ քահանաներ շրջեցնելու զորքի մեջ: Զաքարեի կատարած այս քայլը հայ զինվորականության ավանդույթները վերականգնելու, հայ զինվորի բարոյական արժեհամակարգը ամրապնդելու նպատակ էր հետապնդում:

23 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 232:

24 **Մովսէս Կաղանկատուացի**, էջ 328:

կան ոգին: Երբ սելջուկ-թյուրքերը Տուղրիլի գլխավորությամբ պաշարում են Մանազկերտը, քաղաքի վերակացու իշխանը Աստծուն օգնության է կանչում, եւ հավատով քաջալերում զինվորներին ու բնակչությանը. «Աստուծով պարծեսցուք յաւիտեան, եւ անուան նորա խոստովան եղիցուք, զի նա տացէ զօրութիւն եւ հաստատութիւն ժողովրդեան իւրոյ, որ է օրհնեալ յաւիտեան»[25]: Քաղաքի ամբողջ բնակչությունը միահամուռ ուժերով դիմադրում է մեկ ամիս շարունակ, եւ սելջուկներին չի հաջողվում գրավել Մանազկերտը:

Երբեմն, զորքին առավել եւս ոգեշնչելու նպատակով, քահանաները խաչերով, ավետարաններով զորաշարքերի առջեւից շարժվում էին դեպի թշնամու բանակը[26]:

Եկեղեցական ծիսակատարությունների մեջ էր մտնում նաեւ երգերի կատարումը մարտի դաշտում. «Եւ պաշտօնեայքն կատարէին զտէրունական կանոնն, եւ երաժշտականքն երգս առեալ զյաղթութեանն Փարաւոնի՝ զոչէին. «Տէր իորտակէ զպատերազմունս, Տէր է անուն նորա»: Եւ այլք զցաւղածին օրհնութիւն հնոցին երգէին, ի վերուստ կոչել զօրավիգն զհրեշտակ Աստուծոյ»[27]:

Բացառված չէր նաեւ հոգեւորականների անմիջական մասնակցությունը պատերազմներին՝ չնայած գոյություն ունեցող արգելքներին: Հաճախ նրանք զենք էին վերցնում թշնամու դեմ եւ զինվորներին հավասար կռվում մարտադաշտում: Օրինակ, Արյան լճի ճակատամարտին իրենց մասնակցությունն են բերում քահանաները. «Զեռնամուխ եղեն ի գործ պատերազմին եւ քահանայքն, որ կային ի բազմութեան գաղթականին»[28]: Այս պարագային նրանց մասնակցությունը Եկեղեցին հիմնավորում էր նրանով, որ պատերազմը հոգեւոր էր. «զի հոգեւոր էր պատերազմն եւ ոչ մարմնաւոր, եւ ի վերայ սուրբ եկեղեցեաց եւ ժողովրդեան Աստուծոյ պատերազմէին»[29]:

Հաղթանակից հետո զինվորականները փառաբանում էին Աստծուն. «Եւ ի մտանել նոցա ի սահմանս Տարօնոյ, իջին զօրք ի լեռնէն Սիմն կոչեցեալ, զոր մարդկան սովորութիւնք Սանասունք ասեն ըստ անուան նախնւոյն իւրեանց. եւ ի դիմի հարեալ, յաղթեցին եւ կոտորեցին զամենեսեան. եւ զառ եւ զգերի թափեալ, դարձան ուրախութեամբ փառաւորելով զԱստուած»[30]: Գող Վասիլը թյուրքերի դեմ ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո գոհություն է հայտնում Աստծուն. «Եւ դարձաւ իշխանն Հայոց Վասիլն եւ ամենայն ազատագունդն Հայոց մեծաւ յաղթութեամբ եւ բազում ուրախութեամբ եկեալ ի քաղաքն իւր Քեսուն՝ եւ տուեալ գոհութիւն Աստուծոյ, որ յամօթ արար զթշնամիսն Խաչին Քրիստոսի»[31]:

Քրիստոնեական գաղափարախոսության մեծ ազդեցության մասին է վկայում միջնադարում տարածում գտած այն համոզմունքը, թե հաղթանակները Աստծո բարեհաճ

25 **Արիստակես Լաստիվերտցի**, Պատմութիւն, Աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Երեւան, 1963,էջ 90:

26 Տե՛ս **Ղեւոնդ**, էջ 150:

27 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 232:

28 Անդ:

29 Անդ:

30 **Արիստակէս Լաստիվերտցի**, էջ 118:

31 **Մատթէոս Ուռհայեցի**, էջ 306:

վերաբերմունքի շնորհիվ են լինում: Աստվածային օգնությամբ հաղթանակ տանելու հավատը տարածված էր նաև Բյուզանդիայում, որտեղ Լեւոն Զ. կայսեր (886-912) օրոք ձեւավորվել էր քրիստոնեական զինվորականության գաղափարը, որով մահմեդականների ջիհադին հակադրվում էր քրիստոնեական սրբազան պատերազմի հայեցակարգը: Այս տեսության էությունն այն էր, որ հաղթանակը ռազմական վարպետության եւ աստվածային բարեհաճության արդյունք է: Ընդ որում, առավել կարեւորվում էր երկրորդ գործոնը, այն է՝ ճակատամարտի հաջող ելքը վճռվում է ոչ այնքան ռազմական գիտելիքներով, որքան Աստծո բարեհաճությամբ: Մարտադաշտում արդյունքը կախված էր ոչ թե մարդկային ցանկություններից, այլ նախախնամությունից: Աստվածային բարեհաճությունը ավելի նշանակալի էր, քան ամրացված տեղանքի առավելությունը: Իհարկե, հստակ մշակված ռազմական ծրագիրը հաղթանակի երաշխիք էր, բայց միայն աստվածային նախախնամության ուժը կարող էր ապահովել դրա բարեհաջող իրագործումը[32]:

Նույն երեւույթը տեսնում ենք միջնադարյան հայ իրականության մեջ: Պատմիչները հայոց բանակի հաղթանակների մեջ պարտադիր կերպով նշում են Խաչի օգնությամբ դրանց հասնելը: Վարդանակերտի ճակատամարտում հայերի հաղթանակը Ղեւոնդը վերագրում է Աստծո օգնությանը. «Անդ հասեալ յօգնականութիւն մեծազօրն Աստուծոյ գնդին Հայոց»[33]: Հայոց բանակի հաղթանակների մեջ աստվածային օգնության նշանակությունը մեծանում էր նաեւ այն պատճառով, որ հայկական զինված ուժերը, սովորաբար, զիջում էին հակառակորդին իրենց թվաքանակով: 774 թ. Մուշեղ Մամիկոնյանի տարած հաղթանակի մեջ (200 զինվորով՝ 4000 արաբների դեմ) պատմիչը կարեւորում է տիրոջ օգնությունը. «Օգնութիւն ի տեառնէ վաղվաղակի հասանէր ի թիկունս գնդին Մուշեղայ. եւ բազում հարուածս հարեալ սատակէին ի զօրացն Իսմայելի, եւ զմնացեալսն ի փախուստ դարձուցեալ՝ հետամուտ լինէին մինչեւ յաւանն Արուճ»[34]:

Արձնիի ճակատամարտում (775 թ.) եւս Ղեւոնդը շեշտում է զինվորականների՝ Աստծո օգնությանը դիմելը. «Եւ զայս քաջալերութիւն տուեալ միմեանց՝ ի բարձունսն կարկառեալ զաչս՝ օգնութիւն ի բարձրելոյն հայցէին ասելով. «Աստուած, յօգնութիւն մեզ հայեաց եւ յընկերել մեզ փութա: Ամաչեսցե՛ն զամօթ մեծ որք խնդրեն զանձինս մեր, եւ մեք զանուն քո, Տէ՛ր կարդասցուք ի նեղութեանս մերում եւ զանուն քո, Տէ՛ր, փառաւորեսցուք ի նեղութեանս յոր պաշարեալս եմք. զի ահա շրջապատեալ պահեն զմեզ չարք՝ որոց ոչ գոյ թիւ, եւ ժամանեցին մեզ երկունք մահու»[35]: Թովմա Արծրունին եւս շեշտում է Աստծո բարեհաճ վերաբերմունքի կարեւորությունը հաղթանակի հասնելու գործում. «Յայնժամ առնն քաջի Թադէի զաչս յերկինս համբարձեալ, յօգնականութիւն կարդալով զՏէրն Քրիստոս, եւ ըստ գրեցելումն, թէ «պատրաստ զտանի Աստուած խնդրողաց իւրոց», վաղվաղակի ի թիկունս հասանէ զօրութիւնն Աստուծոյ գնդին Հայոց, թէպէտ եւ յոյժ էին նուազունք. եւ սուր ի վերայ եղեալ կոտորեցին եւ լցին զբերան դաշտին յանկելոց

32 "Два византийских военных трактата конца века", էջ. 37-40:
33 **Ղեւոնդ,** էջ 25:
34 Անդ, էջ 140:
35 Անդ, էջ 149-150:

դիակացն յոյժ խրացեալ առ միմեանս, եւ զբազումս ձերբակալս արարեալ ածեն առաջի իշխանին մեծաւ յաղթութեամբ»[36]: Թովմա Արծրունու համոզմամբ՝ «ոչ միայն քաջքն Հայոց նահապակեցան ի մեծ պատերազմին, այլ եւ անմարմին զօրք երկնաւորք մարտակից եղեն զնդին Հայոց»[37]:

Հոգեւորականների ներկայությունը, քարոզները եւ առավել ես մասնակցությունը պատերազմներին ուներ բարոյահոգեբանական մեծ նշանակություն[38]: Մարտի ընթացքում զորքին բարոյական վեհ գաղափարներ՝ հայրենասիրություն, քաջություն, անձնազոհություն, ներշնչելը առաջ էր բերում հոգեբանական կայուն վիճակ, որ հաղթանակի երաշխիքներից մեկն էր[39]:

Հայ զինվորականության եւ եկեղեցու կապը արտահայտվում էր նաեւ հոգեւոր իշխանության խորհրդանշանների առկայությամբ: Քրիստոնեական նշանը՝ Խաչը համարվում էր զորքի հոգեւավոր ուժը եւ մշտապես առկա էր պատերազմների ժամանակ: Խաչի նշանը զորքի հետ տարվում էր հատկապես մահմեդականների դեմ պատերազմելիս:

Միջնադարում հատկապես մեծ էր հավատը գերբնական ուժերի, գուշակությունների նկատմամբ, ինչը բանակի բարոյահոգեբանական վիճակի վրա անմիջական ազդեցություն էր ունենում: Այսպես, 774-775 թթ. հակաարաբական ապստամբության ժամանակ ժողովրդի մեջ տարածում է գտնում մի վանականի տեսիլքի պատմությունը, ըստ որի Աստծո աջակցությունը ժողովրդի հետ է, եւ Հայաստանը պետք է ազատագրվի արաբների տիրապետությունից: Այս գաղափարը ոգեւորում է զինվորականներին եւ հավատ է ներշնչում իրենց պայքարի արդարացիության եւ հաղթական ավարտի նկատմամբ[40]: Վրանգի պահին հոգեւոր սնունդը, պայքարի իմաստավորումը մեծ ուժ էր տալիս զինվորականներին:

ԺԱ. դարում մենք տեսնում ենք հակառակ երեւույթը, երբ հասարակության մեջ տարածում գտած, ապագայի վերաբերյալ մռայլ երանգավորում ունեցող գուշակությունները բանակի գաղափարախոսության համար կործանարար հետեւանքներ են ունենում: Ազաթոնի եւ Հովհաննես Կոգեռն վարդապետի տեսիլքները հոռետեսական էին, դրանք կանխագուշակում էին հայկական պետության կորուստը եւ օտար տիրապետությունների լծի տակ հայտնվելը[41]: Հայ զինվորականության շրջանում ձեւավորվում էր բարոյահոգեբանական մի վիճակ, երբ պայքարելն անիմաստ էր թվում, իսկ զինվորականությունը ի զորու չէր պաշտպանելու երկիրը, քանի որ ամեն ինչ ի վերուստ էր նախասահմանված: Հասարակության մեջ եւ հայոց բանակում անկումային տրամադրությունները

36 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 436:

37 Անդ, էջ 232:

38 Տե՛ս **Կ. Ոսկանյան,** Հայոց բանակի եւ Եկեղեցու փոխհարաբերությունների պատմությունից (5-13-րդ դարեր). «Հայկական բանակ», 2007, թ.1, էջ 48:

39 **Я. Подоляк**, *Практическикие вопросы военной психологии*, Москва, 1987, էջ 112:

40 **Ղեւոնդ,** էջ 141:

41 Տե՛ս **Ա. Հովհաննիսյան**,Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. I, Երեւան, 1957, էջ 47-48:

ուժեղանում են ԻԱ. դարի 20-ական թվականներից, երբ նաև սկիզբ է առնում հայ զինվորականության եւ բնակչության զանգվածային գաղթը դեպի Բյուզանդիա: Միաժամանակ կայսրությունը Հայաստան էր տեղափոխում օտարներից, օրինակ՝ բուլղարներից կազմված զորաջոկատներ[42]:

Հայաստանի մռայլ գույներով ներկայացվող ապագայի կողքին Բյուզանդական կայսրությունն էր իր գայթակղիչ առաջարկներով: Բյուզանդիայի նվաճողական քաղաքականությունը բազմակողմանի էր այն իմաստով, որ մի կողմից քարոզչական աշխատանքն է, որ բարոյապես հուսալքում էր հայ զինվորականներին եւ իշխաններին, մյուս կողմից դիվանագիտական ճնշումները եւ ռազմական ուժը: Բյուզանդիայից եկող վտանգի մյուս կողմն այն էր, որ հայ հասարակության մեջ Բյուզանդիան չէր ընկալվում իբրեւ թշնամի երկիր, չնայած Բյուզանդիայի կենտրոնական իշխանության դեմ ուղղված ապստամբություններին հայ զինվորականությունը եւ իշխանները գործուն մասնակցություն էին ցուցաբերում[43]: Պատմիչների վերաբերմունքը Բյուզանդիայի, բյուզանդական կայսրերի նկատմամբ դրական է մինչեւ սելջուկ-թյուրքերի արշավանքները[44], երբ արդեն ակնհայտ էին Բյուզանդիայի կործանարար քաղաքականության հետեւանքները:

Բյուզանդական բանակի դեմ ռազմական հաղթանակներ տանելով հանդերձ՝ չհաջողվեց պահպանել պետությունը : Հայ զինվորականությունը հարկադրված եղավ ծառայության անցնել հարեւան երկրների բանակներում:

42 Տե՛ս **Р. Бартикян**, *О болгарском войске в Васпуракане и последних годах царства Арцрунидов*, **Ա. Հովհաննիսյան**,Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. I, էջ 191-199:

43 Տե՛ս **Ն. Բարթիկյան**, Հայաստանի նվաճումը Բյուզանդական կայսրության կողմից, «Հայ-բյուզանդական հետազոտություններ», հ. I, Երեւան, 2002, էջ 242-244:

44 Տե՛ս **Ա. Հովհաննիսյան**, նշվ. աշխ., էջ 44: